ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Նիւ-Եօրքի Ադանայի Գրադարանի Ընկերութեան փոխադրած ութ հարիւր ութսուն երկու ռուբ. 35 կոպ. (882 ռ. 35 կ) պատուիրելով մուծել մատեան յօգուտ դաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 763։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Գանձակից Պետական դպրոցի մի խումբ աշակերտների կողմից Գրիգոր Թումանեանի փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ Հայաստանի վերաշինութեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 1 ապրիլի, թ. 768։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ալիւրի վաճառումից դոյացած քսան և չորս հազար վեց հարիւր երեսուն և վեց ռուբ. 60 կոպ. (24,636 ռ. 60 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ դաղթականների։ 5 ապրիլի, թ. 788։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով ստացուած յօգուտ դաղթականների քառասուն և ութ հազար ինն հարիւր յիսուն (48,950) ռուբլի Պետական Նպաստ։ 5 ապրիլի, թ. 789։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ալիւրի վաճառումից դոյացած երկու հազար երկու հարիւր յիսուն (2250) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ դաղթականների։ 5 ապրիլի, թ. 790։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով ստացուած յօգուտ դաղթականների Պե-

տական նպաստ—երեսուն և չորս հազար վեց հարիւր երկու (34,602) ռուբլին։ 5 ապրիլի, թ. 791։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի միջոցով Խարկովի հայ համայնքի փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 5 ապրիլի, թ. 792։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին ալիւրի վաճառումից գոյացած յիսուն (50) ռուբ., պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների։ 5 ապրիլի, թ. 793։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով քառասուն և ութ հազար ինն հարիւր յիսուն ռուբլու (48,950 ռ.) վարկ բանալ։ 5 ապրիլի, թ. 795։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով երեսուն և չորս հազար վեց հարիւր երկու ռուբլու (34602 ռ.) վարկ բանալ։ 5 ապրիլի, թ. 796։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով երկու հազար երկու հարիւր յիսուն ռուբ. (2250 ռ.) վարկ բանալ։ 5 ապրիլի, թ. 797։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնաժողովի անունով քսան և չորս հազար վեց հարիւր երեսուն և վեց ռուբ. 60 կոպ. (24,636 ռ. 60 կոպ.) վարկ բանալ։ 5 ապրիլի, թ. 798։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Պետրովսկից Աղէքսանդր Խուդադեանի փոխադրած երեսուն և հինգ (35) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 ապրիլի, թ. 802։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Տիդրոյիթի Հայ Տիկնանց Բարեսիրական Ընկերութեան փոխադրած մի հազար չորս հարիւր քսան և ութ (1428) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 ապրիլի, թ. 803։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Շուշու Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի փոխադրած մի հազար (1000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 9 ապրիլի, թ. 804։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Սինոդին տալ Մայր Աթոռի միաբան Հմայեակ վարդապետ Արշարունուն, բժշկութեան համար, միանուագ նպաստ մի հարիւր (100) ռուբլի։ 12 ապրիլի, թ. 807։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Համամլի գիւղի Աւագ ա. քահանայ Տէր Սիմէոնեանի փոխադրած մի հարիւր (100) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 ապրիլի, թ. 826։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Տագանրոգի Յովհաննէս քահանայ Օգսենտեանի Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի միջոցով փոխադրած երեք հարիւր յիսուն և ութ (358) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 13 ապրիլի, թ. 827։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ցանձնաժողովի միջոցով Սինոդի պ. Պրոկուրորից և ծառայողներից ապրիլ ամսուայ ռոճիկներից բարձած եօթ ռուբ. 86 կ. (7 ռ. 86 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների։ 13 ապրիլի, թ. 828։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Շուշու Եղբայրական Օգնութեան Կանանց Կոմիտէի փոխադրած յօգուտ Հայրենիքի վերաշինութեան և գաղթականների (Միջազգաբ աքսորած) ութ հարիւր (800) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն, 13 ապրիլի, թ. 829։

Նորին Սրբութեան մակագրութեամբ պատուիրուեց Մայր Տաճարի Լուսարարապետ Տ. Անանիա Արքեպիսկոպոսին տալ Վանի Աւանց դիւղացիների (տեղական եկեղեցու դրծածութեան համար) մի հատ հին վակաս։ 15 ապրիլի, թ. 841։

Նորին Սրբութեան հրամանով Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Ճանձնաժողովին ուղարկել Վանայ գաւառապետ Տերմէնի անունով մի հազար (1000) ռուբլի, յանձնելու հետզհետէ Վարագայ Վանքի Հոգաբարձութեան՝ քայքայուած տնտեսութեան վրայ ծախսելու համար։ 15 ապրիլի, թ. 852։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Խարկովի համալսարանի ուսանող Սրամ Սարգսեանի փոխադրած (գոյացած կազմակերպուած երեկոյթից) երկու հազար ութսուն և եօթ ռուբլի 40 կ. (2087 ռ. 40 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 16 ապրիլի, թ. 853։

Կոնդակ Եգիպտոսի Առաջնորդ Տ. Թորգոմ եպիսկոպոսի անունով, որով պատուիրուեց մեկնել Պարսկա-Հընդկաստանի Հայոց թեմը և յորդորել թեմում եղած հայերին Հայաստանի վերաշինութեան ընդհանուր կարիքների օգտին դրամական նուիրաբերութիւն անել։ 22 ապրիլի, թ. 900։

Կոնդակ շրջաբերական Պարսկա-Հնդկաստանի Հայոց թեմի արժանապատիւ հայ քահանաների և ժողովրդի ամէն դասակարգի անունով, որով յորդորուեց դրամական առատ նուիրաբերութիւն տալ Թորգոմ եպիսկոպոսին, որ

կարգուած է այդ նպատակով Պարսկա-Հնդկաստան մեկնել, որպէս զի հանգանակուած դրամով հնարաւոր՝ լինի քանդուած և աւերուած Հայաստանը վերաշինել։ 22 ապրիլի, թ. 902։

Կոնդակ շրջաբերական նոյն իմաստով յանուն Եթովպիայի և Սուդանի վիճակաւոր հայ քահանաների և ազգայնոց անունով։ 22 ապրիլի, թ. 903։

Կոնդակ Մայր Աթոռի միաբան Տ. Բագրատ եպիսկոպոսի և Տ. Գարեգին Ծ. վարդապետի անունով, որով կարգուեցան, համաձայն Փոխարքայի հեռագրական հաղորդագրութեան, Հայ հոգևորականութեան կողմից ներկայացուցիչներ՝ մասնակցելու Կովկասում «Զեմստվո» մտցնելու առթիւ կազմուած ժողովի նիստերին, որ սկսուելու է սոյն ապրիլի 26-ից, Տփխիսում։ 22 ապրիլի, թ. 904։

Գրութիւն Վրաստանի Հայոց թեմի Առաջնորդի անունով, որով ուղարկուեց մի մեծ սրուակ Ս. Միւռոն, յանձնարարելով քաղաքական իշխանութեան աջակցութեամբ ապահով ճանապարհով ուղարկել Ամերիկայի Հայոց Առաջնորդին՝ թեմի հոգևոր պիտոյքների համար։ 22 ապրիլի, թ. 905։

Գրութիւն Դիւանի Ամերիկայի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Արսէն Ծ. վարդապետ Վեհունուն Ս. Միւռոնի ուղարկելու մասին։ 22 ապրիլի, թ. 906։

Կոնդակ Օրհնութեան և գոհունակութեան Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Վիդրո Ուիլսընի անունով՝ նորա դէպի հայերը ցոյց տուած մարդասիրական վերաբերմունքի համար։ 23 ապրիլի, թ. 914։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ղարսից Յովհաննէս և Մկրտիչ Գոլտանչեանների փոխադրած մի հարիւր յիսուն (150) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 ապրիլի, թ. 915։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Խոյթայի և շրջակայքի (Աստրախանի թեմ.) գործակալի պաշտօնակատար Գրիգորիս քահանայ Գարաքեհեանի փոխադրած յօգուտ հայ գաղթականների քսան և հինգ (25) ռուբլին և Հայաստանի վերաշինութեան տասն և երկու (12) ռուբլին, ընդամենը երեսուն և եօթ (37) ռուբլի, պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 ապրիլի, թ. 916։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին նոյն Գրիգորիս քահանայ Գարաքեհեանի փոխադրած Կազարմա գիւղից եօթն ռուբ. 20 կ. (7 ռ. 20 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 ապրիլի, թ. 917։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ախալցխայի Հայոց Հոգևոր Կառավարութեան փոխադրած եօթ ռուբ. 97 կոպ. (7 ռ. 97 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 25 ապրիլի, թ. 918։

Կոնդակ Աստրախանի Հայոց թեմի Առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոսի անունով, որով արտօնուեց բանալ Օվա գիւղում եկեղեցական-ծխական դպրոց, տեղական հայ ժողովրդի ցանկութեան համաձայն։ 27 ապրիլի, թ. 933։

Դիւանի գրութեամբ, համաձայն Նորին Սրբութեան հրամանի, առաջադրուեց Մայր Աթոռի Տպարանի Վարչութեան ուղարկել Սարիղամիշի Տ. Տաճատ քահանայ Վարդանեանին տասնական օրինակ եկեղեցական զանազան մատեաններ՝ բաժանելու Տաճկաստանի թալանուած և աղքատ եկեղեցիներին։ 27 ապրիլի, թ. 934։

Կոնդակ օրհնութեան Անգղիոյ Աւագների խորհրդարանի անդամ Վսեմաշուք Լորդ Ջէյմս Բրայսի անունով՝ հայերի և հայկական դատին պաշտպանութիւն և աջակցութիւն ցոյց տալու համար։ 27 ապրիլի, թ. 937։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Նիւ-Հէյվենի «Հայ Տիկնանց Որբախնամ Ընկերութեան» փոխադրած երկու հարիւր երեսուն երկու ռուբլի 55 կ. (232 ռ. 55 կոպ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 940։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Լոս-Անջելոյի Հայ Տիկնանց «Կարմիր Խաչի Ընկերութեան» փոխադրած ինն հարիւր քսան և ութ (928) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 941։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Ակրոն-Օհիօի Ցանձնախմբի փոխադրած մի հազար հինգ հարիւր երեք (1503) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 942։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին «Հայրենիք» թերթի փոխադրած երեք հարիւր ութսուն հինգ ռուբլի 95 կ. (385 ռ. 95 կ.), ստացած Կանադայի Կոլթաբնակ հայերից, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 943։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Վոթերթաուն քաղաքի «Սեբաստիոյ Կամաս գիւղի Ուսումնասիրաց ընկերութեան» փոխադրած վեց հարիւր քառասուն հինգ (645) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ կամաւորների և գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 944։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Լուիսիլիոնիս քաղաքի «Փղիի Զանազգի գիւղի Ուսումնասիրաց Ընկերութեան» փոխադրած երեք հազար (3000) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան

յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 945։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Եղեմի (Ամերիկա, Կալիֆորնիա) «Ազգային Շահուց Պաշտպանութեան Յանձնախմբի» փոխադրած մի հազար մի հարիւր իններսուն և մի (1191) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 946։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին «Հորիզոն» լրագրի խմբագրութեան փոխադրած՝ ա) Սուխումի Որբախնամ «Գութ» Ընկերութիւնից յօգուտ որբերի—89 ռ. 30 կ. և բ) Մեշեդիի հայ և ռուս հասարակութիւնից յօգուտ գաղթականների—800 ռ., ընդամենը ութ հարիւր ութսուն և ինն ռուբ. 30 կ. (889 ռ. 30 կ.), պատուիրելով մուծել մատեան և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելեաց։ 27 ապրիլի, թ. 947։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Լուգանսկից հայ գաղութի կողմից Պետրոս Մանուշակեանի փոխադրած հինգ հարիւր (500) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 948։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Ամերիկայի Կլիվիլենտ քաղաքի «Հայ Տիկնանց Բարեսիրական Ընկերութեան» փոխադրած երեք հարիւր եօթանասուն երեք (373) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 27 ապրիլի, թ. 949։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Կուբանեան շրջանի Ա.Ֆանասևսկի-Պոստիկ գիւղացի Լուսխաթուն Սելվեանի փոխադրած ինն ռուբլի 50 կոպ. (9 ռ. 50 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղ-

թականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 ապրիլի, թ. 958։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին նոյն գիւղացի Գէորգ Ստեփանեանի փոխադրած ինն ռուբ. 60 կ. (9 ռ. 60 կ.), պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 ապրիլի, թ. 959։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին նոյն գիւղացի Կարապետ և Նորա որդի Մնացականի փոխադրած քառասուն և հինգ (45) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել ըստ պատկանելոյն։ 28 ապրիլի, թ. 960։

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սինոդին Գողթնեաց գաւառի Հանդամէջ գիւղացի Յովհաննէս Սուլխանեանի փոխադրած երեք հարիւր (300) ռուբ. պատուիրելով մուծել մատեան յօգուտ գաղթականների և անդորրագիրն ուղարկել նուիրատուին։ 28 ապրիլի, թ. 961։

Դիւանի գրութիւն Ղևոնդ վարդապետ Մարդուկէսեանի անունով, որով յանձնարարուեց, որ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեց թոյլ տալ մայիս ամսի վերջին մեկնել Ամերիկա ընդ միշտ։ 28 ապրիլի, թ. 967։

Կանդակ Ղարաբաղի թեմի ժամ. կառավարչի անունով, որով հաստատուեցին «Մարիամ-Ղուկասեան» Օրիորդաց Դպրոցի Հոգաբարձուներ պ. պ. Գրիգոր Մինասբէկեան, Նիկողայոս Դասպարեան, բժիշկ Նիկողայոս Եարամիշեան, Լևոն Վարդապետեան, Սերգէյ Աթաբէկեան, Կարապետ Յակովբեան, Թէոդորոս Տէր Յովհաննիսեան և Սեդրաք Եղիեան (8 հոգի)։ 28 ապրիլի, թ. 969։